[էջ 69, Հայկական արգել]

R. D. Wilkinson, Orontes Son of Artasyras, *Revue des Etudes arméniennes* (Paris), N. S. vol. 7 (1970), p. 445—450.

Ярослав Р. Дашкевич, Эдвард Трыярски, Армяно-кыпчакский документ из Константинополя 1618 г., *Folia Orientalia* (Krakow), vol. 11 (1969, published 1970), p. 123—137.

Ярослав Р. Дашкевич, Эдвард Трыярски, Армено-кыпчакские предбрачные договоры из Львова (1598—1638 гг.), *Rocznik Orientalistyczny* (Warsaw), vol. 38 zeszyt 2 (1970), p. 67—107.

ՀԱՎԵԼՎԱԾ
1969 Թ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Ch. Burchard, Zur armenischen Ueberlieferung der Testamente der zwoelf Patriarchen, *Beihefte zur Zeitschrift für die neutestamentliche Wissenschaft* (Giessen), vol. 36 (1969), p. 1—29.

H. Gastritius, Der Armenienkrieg des Maximinus Daia, *Jahrbuch für Antike und Christentum* (Münster), vol. 11—12 (1968—69), p. 94—103.

Y. Dachkevytch and E. Triyarski Le traité de Torossowytch avec les Arméniens de Lvov et de Kakénetz de 1627 en tant que monument de la langue arméno-comane, *Rocznik Orientalistyczny* (Warsaw), vol. 33 (1969), p. 77—95.

P. Krüger, Mechitar von Sebaste als Kulturträger seiner Nation, *XVII Deutscher Orientalistentag*, herausgegeben von W. Voigt *(Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft, Supplementa I)*, Wiesbaden 1960, vol. 2 p. 463—467.

M. van Esbroeck, Encore la lettre de Justinien: sa date 560 et non 561, *Analecta Bollandiana* (Brussels), vol. 87 (1969), p. 442—444.

[Հմմտ. *Analecta Bollandiana*, հ. 86 *(1968)*, էջ 351—371։

[Հուստինիանոսի Թուղթը Ավետման ու Սբ-նընդյան վերաբերյալ թվագրված է ըստ այն վկայության, որ պահպանված է Երուսաղեմցի հայերին Գրիգոր Արծրունու ուղարկած նամակում]։

Պրոֆ. ՌՈԲԵՐՏ ԹՈՄՍՈՆ (ԱՄՆ)

ՆՅՈՒԹԵՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմանագիտական ուսումնասիրությունները թույլ են տալիս լուսաբանել պատմական Նախիջևանի Ճահուկ (Շահապունք) գավառի բազմաթիվ բնակավայրերի տեղադրությունը, ներկայացնել հուշարձանները։ Բնակավայրերի տեղադրությունը ուսումնասիրելիս և շարադրելիս աչքի առաջ պետք է ունենալ XIII դարի պատմիչ Ստ. Օրբելյանի պատմության 29 գլխում տրված Ճահուկ գավառի կազմությունը, ըստ որի Ճահուկը եղել է Սյունիքի 14-րդ (ԺԴ) գավառը և նրա կազմում ներկայացված են 48 գյուղ[1]։ Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ այս գավառի գյուղերի մեծ մասի անցյալի, պատմական հուշարձանների կառուցման մասին չեն պահպանվել ո՛չ մատենագիտական, և ո՛չ էլ վիմագրական տեղեկություններ, որի պատճառով տեղավայրերը ուսումնասիրելիս ըստ հնարավորին գրանցել ենք բնակավայրերի շրջակայքում գտնվող գյուղատեղիները, եկեղեցիները և այլ պատմական հուշարձաններ, ինչպես նաև օգտվել ենք ժողովրդի մեջ պատմվող ավանդություններից։

Ճահուկ գավառի հուշարձանները (եկեղեցիներ, վանքեր) հիմնվել են գերազանցապես XII—XVI և XVI—XVII դարերում։ Բազմաթիվ հուշարձաններ ավերվել են XIX դարի առաջին կեսին, դարի վերջին և առաջին հսմաշխարհային պատերազմի տարիներին։

---

1 Տե՛ս «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն նահանգին Սիսական», ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 378—379։ Պետք է նշել, որ Ճահուկ գավառի՝ Օրբելյանի տված հարկացուցակում գավառի մի քանի գյուղեր չեն նշված։ Այսպես, օրինակ, Ստ. Օրբելյանը իր պատմության 49 գլխում գրում է. «...առ եպիսկոպոսի մի յԱՇՕՊՈՅ վանս 'ի Շահապնս՝ Պետրոս անուն» (էջ 258), որտեղ «յԱՇՕՊՈՅ»-ը Շահապունքի Օձոփ (այժմյան Բաղամլու) գյուղն է, որը տեղ չի գտել գավառի կազմի մեջ։ Մեր կարծիքով, նշված չեն Շահապունիքի ներկայիս Կվաձոր, Զոնել գյուղերը ևս։

Պատմական Ճահուկ գավառը բաժանված է եղել երկու մասի, որի Շահապունիք մասը երբեմն եղել է առանձին գավառ[2]։ Ստորև Շահապունիքի գյուղերի տեղադրությունը և պատմական հուշարձանները ներկայացնում ենք որպես մի առանձին մաս, իսկ Ճահուկի գյուղերի տեղադրությունն ու պատմական հուշարձանները՝ առանձին, նկատի ունենալով նյութի մատչելիությունն ու հարմարությունը։

Տեղերը ուսումնասիրելիս մեզ սիրով օգնել և պատմահնագիտական հավաքածուներ է ներկայացրել Նախ. ԻՍՍՀ մարզային պատմության թանգարանի գիտխորհրդի անդամ, Շահբուզի շրջանի Արինջ գյուղի հայկական միջնակարգ դպրոցի պատմության ուսուցիչ Բելիֆոն Ալեքսանյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը։

ՇԱՀԱՊՈՒՆԻՔ

Պատմական Շահապունիք գավառամասը (գավառը) այժմյան Նախ. ԻՍՍՀ-ի Շահբուզի շրջանն է, որը կազմավորվել է 1930-ական թթ. սկզբներին։ Նրա այժմյան տարածությունը կազմում է 815 քառակուսի կիլոմետր։ Ներկայիս շրջանի գրաված տերիտորիան աննշան փոփոխություններով ընդգրկում է պատմական Շահապունիքի տարածությունը։ Այն սահմանակից է պատմական Վայոց Ձորին (այժմյան ՀՍՍՀ Ազիզբեկովի շրջան), Ծղուկին (ներկայիս ՀՍՍՀ Սիսիանի շրջան), Երնջակին (այժմյան Նախ. ԻՍՍՀ-ի Ջուլֆայի շրջան) և Ճահուկին (այժմյան Նախիջևանի շրջանի մի մասը)։

Շահապունիքի պատմական բնակավայրերը տեղադրված են լեռների գրկում, ձորակների մեջ։ Գավառի համարյա մեջտեղով հոսում է Նախիջևանչայ գետը, որը սկիզբ է առնում Սիսիանի լեռնանցքի փեշերից։ Նախիջևանչայ գետի աջ և ձախ ափերին, նրան սնող Քյուքիչայ, Նորսչայ, Շահբուզչայ, Սալաուզչայ վտակների և ձորերի երկայնքով տեղադրված են պատմական գյուղերը։

Շահապունիքի Քյոլք (ներկայիս Քյուլուս), Օձոփ (ներկայիս Բաղամլու), Շահապունիք (ներկայիս Կյանդ Շահբուզ), Նորագյուղ (ներկայիս Նորս) գյուղերն այս հոդվածից դուրս ենք թողնում. նրանց մասին մեր կողմից պատմահնագիտական տեղեկություններ արդեն հրապարակած լինելու պատճառով[3]։

ԽՈՋՐԱՄԻՐ.— Այս գյուղատեղին գտնվում է պատմական Կոնքի, Կուքի գյուղից մոտ 5 կմ վերև, «Կարնի գյոլ» լճակի մոտ։ Պատմական գյուղատեղին տեղադրված է բարձրաբերձ լեռների հարթ փեշերին, Նախ. ԻՍՍՀ-ի և ՀՍՍՀ սահմանի շրջանում։ Այս գյուղի անցյալի մասին ոչինչ հայտնի չէ և վաղուց է ինչ այն անմարդաբնակ է։ Փլատակներում մնացած խաչքարտապանաքարերը վկայում են, որ այս գյուղը եղել է հին հայկական գյուղ, մոտավորապես 30—40 տուն ազգաբնակչությամբ։

ԶՈՆԵԼ (Զարինե).— Այս գյուղի ավերակները գտնվում են Քյուքիչայ վտակի վերին հոսանքի շրջանում, Քյուքի գյուղից 6—7 կմ դեպի բարձրաբերձ լեռները, մի մեծ ժայռի տակ։ Ըստ ավանդության այս գյուղի հին անունը եղել է Զարինե, որը հետագայում աղավաղվել և դարձել է Զիրպել, Զոնել։ Պատմական գյուղը բավական մեծ է եղել, այդ են վկայում այժմյան ավերակներում պահպանված մոտ 600 քանդակազարդ տապանաքարերը։ Գյուղից մոտավորապես 1 կմ վերև գտնվում է մի չորացած փոքրիկ լճակ, որի շուրջը կան չորս մեծ գուռեր։ Գյուղի շրջակայքում կան նաև բրոնզեդարյան բնակավայրեր, որոնց պեղումներից Բ. Ալեքսանյանը հայտնաբերել է խեցեղեն և այլ հնագիտական իրեր։

Զոնելի բարձրաբերձ ժայռի վրա գտնվում է գյուղի ամրոց-բերդը, որի հետքերը մինչև օրս տեսանելի են։ Ամրոցը իր բնական դիրքի շնորհիվ անառիկ է եղել, շրջապատված ամուր պարիսպներով։

ՔՅՈՒՔԻ (Կոնքի, Կուքի).— Պատմական Կոնքի, Կուքի գյուղը այժմյան Շահբուզի շրջանի Քյուքի գյուղն է, որը գտնվում է Քյուքիչայ վտակի աջ ափին։ Այն Շահբուզ շրջկենտրոնից 23—24 կմ է հեռու։ Գյուղը փռված է Քյուքի լեռան հարթավայրային մասում, շրջապատված է լեռներով, ունի գեղեցիկ բնական դիրք և լավ բուսականություն։ Քյուքին Ստեփանոս Օրբելյանի նշած Կուքի գյուղն է, որը Շահապունիքի հին հայկական գյուղերից մեկն է։ Այդ են վկայում գյուղի շրջակայքում գտնվող նախնադարյան

---

2 Պատմիչ Ա. Դավրիժեցին իր «Պատմութիւն վարդապետի Դաւրիժեցւոյ» (Վաղարշապատ, 1896) գրքի 427 էջում գրում է. «Մերձ մայրաքաղաքին Նախչուանու կայ մի գաւառ մի, զոր անուանեն Շահաբունւոյ ձոր...»։ Իսկ մի այլ աղբյուրում՝ Մեսրովբ Սմբատյանցի «Նկարագիր սուրբ Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա» (Տփղիս, 1904) գրքում գտեղված 1696 թ. գրված մի ավետարանի հիշատակարանում նշված է, որ այն գրվել է. «...'ի Նախիջեվանայ Շահապունիք գաւառի Գոմեր գեղջ...» (էջ 150)։ Թվում է, թե բերված փաստերը հիմնավորում են Շահապունիքի առանձին գավառ լինելու հանգամանքը։

3 Տե՛ս ՊԲՀ, 1971, № 2, էջ 271—274։

մարդկանց դամբարանները, բնակավայրերի, ամրոցների, եկեղեցիների ավերակները։ Բ. Ալեքսանյանի կատարած պեղումների ժամանակ այստեղից հայտնաբերվել են վաղ բրոնզեդարյան ժամանակաշրջանի հնագիտական իրեր։

Պատմական Կոնքին մեծ գյուղ էր և գտնվում էր ներկայիս գյուղի տեղում։ Ունեցել է հայտնի Ս. Նշան (Հազարաբյուրաց, Հազարափրկիչ) վանքը, Ս. Գրիգոր, Ս. Աստվածածին, Ս. Վարդան եկեղեցիները։ Բայց այժմ այդ չորսն էլ ավերակ վիճակում են և վերջին երեք եկեղեցիների հետքերը հազիվ են երևում։ Ս. Վարդան եկեղեցու ավերակների տեղում XX դարի սկզբներին կառուցել են մզկիթ։ Քյուքիի Ս. Նշան հայտնի վանքը գտնվում է այժմյան գյուղի վերին թաղամասում։ Վանքի, սրան կից դպրատան պատերը մնում են մոտավորապես 2—3 մ բարձրությամբ, դրսից շարված են սրբատաշ քարով, ներսից՝ քար ու կրի շաղախով։ Վանքն ունի քառամույթ գմբեթավոր բազիլիկայի հորինվածք, շրջապատված է եղել ընդարձակ քառանկյունի պարսպով, որը ունեցել է հարավային և արևմտյան դռներ։ Վանքը կառուցված է բակի հյուսիսային կողմում, իսկ արևմտյան և հարավային կողմերում եղել են միաբանների խցերը և այլ շինություններ։ Ս. Նշան վանքին կից է նրա (վանքի) գերեզմանատունը, որն ընկնում է պարսպից դուրս, վանքի հյուսիս-արևմտյան մասում։

Քյուքիի այս նշանավոր վանքը, Ս. Նշան կամ Հազարաբյուրաց անունով, հիմնադրվել է XII դարում և վերակառուցվել XVII դարում՝ միջնադարում Շահապունիքի հոգևոր և կրթական կենտրոններից մեկն էր։ Այժմյան ավերակ վիճակում խորանի պատին և արևելյան դռան գլխաքարին կան արձանագրություններ, որոնց մաշվածության պատճառով հնարավոր չեղավ ընդօրինակել։

Քյուքիից մոտ 4 կմ դեպի վերև գտնվում է «Կարնի (Կանլի) դյոլ» լճակը, որն ունի 11 մ խորություն և մեկ միլիոն խորանարդ մետր ջրի տարողություն։ Այդ լճակը 1908 թ. վերածվել է ջրամբարի և այդ նպատակով էլ օգտագործվում է մինչև այժմ։

ՅՈՒԽԱՐԻ ՌԵՄԵՇԻՆ (Անուշավան).— Այս գյուղը գտնվում է Քյուքիչայ վտակի աջ ափին, ձորակի ամենավերին մասում, Աշաղը Ռեմեշին գյուղից 5 կմ դեպի լեռները։ Մեր կարծիքով ներկայիս գյուղի տեղում է եղել պատմական Անուշավան գյուղը։ Նրա հնությունների ուսումնասիրությունը հաստատում է գյուղի հին և հայկական լինելը։ Շրջակայքում կան բրոնզեդարյան բնակավայրեր, որտեղից հայտնաբերվել են հնագիտական իրեր։ Գյուղից քիչ վերև գտնվում է հայկական բավական մեծ գերեզմանատունը։ Բնակավայրն ունեցել է նաև քարաշեն եկեղեցի։ Վերջերս Բ. Ալեքսանյանի կողմից հայտնաբերվեց «Անապատ» անհայտ բերդամրոցի հետքերը։ Ամրոցը գտնվում է գյուղից 2 կմ վերև, ավելի քան 200 մ բարձրություն ունեցող մի ժայռի վրա։ Ռազմական տեսակետից ունի բնականից լավ և ապահով դիրք։ Այն շրջապատված է եղել պարսպով, որը շարված է քարերով և կրաշաղախով։ Ամրոց մտնելու համար կա միայն մի մուտք, որը իրենից մի լուսամտաչափ կլոր անցք է ներկայացնում։ Ներսում տեսանելի են այլ շինությունների հետքեր։

ԱՇԱՂԸ ՌԵՄԵՇԻՆ (Արմավաշեն).— Այս գյուղը այժմյան Շահբուզի շրջանի Աշաղը Ռեմեշին գյուղն է, որը գտնվում է Քյուքիչայ վտակի աջ կողմում, Քյուքի գյուղից 10—11 կմ ներքև։ Պատմական գյուղը տեղադրված է եղել ձորի մեջ։ Այս գյուղը Ստ. Օրբելյանի հիշատակած Արմավաշենն է.

Շրջակա հայկական բնակչության մեջ պատմվում է մի ավանդություն, ըստ որի գյուղի իսկական անունը եղել է Ուռամիջին, այսինքն ուռենիների մեջ տեղավորված գյուղ։ Այս ենթադրությունը կարծես ապացուցում են գյուղի շրջակայքում գտնվող բազմաթիվ ուռենիները։ Արմավաշենը ունեցել է եկեղեցի, որի ավերակները այժմ էլ տեսանելի են և ճանաչվում են որպես սրբավայր։ Արմավաշենի գերեզմանատունը այժմ ունի ավելի քան 200 քանդակազարդ տապանաքարեր, որոնց մի քանիսի վրա կան արդեն մաշված արձանագրություններ։

Գյուղից դուրս, մոտավորապես 1,5—2 կմ ներքև, Քյուքիչայ վտակի ափին գտնվում է «Կզբլ կշլաղ» (Կարմիր արոտավայր) գյուղատեղին։ Այս գյուղատեղի մասին ստույգ տեղեկություններ չկան։ Գետի մյուս ափին, մի փոքրիկ բլրակի վրա կա մեծ և գեղեցիկ քանդակներով երկու խաչքար։ Խաչքարերը արձանագրություններ չունեն, բայց նրանց արվեստը մատնանշում է XII դարին վերաբերվելը։

ԱՐԻՆՋ (Ակոռի).— Այս գյուղը գտնվում է Քյուքիչայ վտակի աջ ափին, Շահբուզ շրջկենտրոնից 4 կմ հեռավորության վրա, Շահբուզից Սիսիան տանող ճանապարհի ձախ կողմում։ Գյուղը իր բնական դիրքով տեղավորված է բավականին խոր ձորի մեջ, ունի փարթամ և բերքառատ խաղողի հնարմատ այգիներ։

Արինջը պատմական Շահապունիքի խոշոր հայկական գյուղերից մեկն է եղել։ Բայց ցավոք, պատմական աղբյուրներում նրա մասին ոչ մի տեղեկություն չի պահպանվել։ Գյուղի հայկական եկեղեցին, Մարիամ Աստվածածին անունով, գտնվել է գյուղի կենտրոնական մասում։ Մոտավորապես 1675—1677 թթ. Նախիջևանի Շարիֆ խանի զավթիչների կողմից ավերվել է։

Հետո, 1874 թ., հին եկեղեցու տեղում գյուղի բնակչության կողմից կառուցվում է նորը (դռան գլխաքարը 1874 թ. գրությամբ ներկայումս գտնվում է գյուղի հին գերեզմանատանը), որն այժմ նորից ավերակ է։ Նրա տեղում կառուցված է եղել գյուղի հին դպրոցը։

Տեղի մեր դիտումները հիմք են տալիս ենթադրելու, որ պատմական գյուղը տեղավորված է եղել ներկայիս գյուղից մոտավորապես 3 կմ վերև, Քյուքիչայ վտակից և Ճանապարհից 2 կմ դեպի լեռների գիրկը, գեղեցիկ մի հարթությունում, «Տալկանոց» կոչվող դաշտում։ Այդ վայրը մինչև այժմ էլ շրջակա բնակչության կողմից անվանվում է «Քոհնա Արինջ» (հին Արինջ)։ Մեր կարծիքով այդ գյուղատեղում Ստ. Օրբելյանի նշած Ակոռի գյուղն է եղել։ Պատմականորեն ստույգ հայտնի չէ, թե երբ է ասպարեզից վերացել Ակոռին՝ իբրև բնակավայր։

Վերջին տարիներին Բ. Ալեքսանյանի ուսումնասիրությունների և պեղումների շնորհիվ հին և նոր գյուղերի շրջակայքից գտնվել են էնեոլիթի, բրոնզեդարյան և միջին դարերին վերաբերող տասնյակ հնագիտական նյութեր՝ աղորիքներ, սանդեր, կճուճներ, զարդանախշերով պուլիկներ, բրիչներ, որոնք արժեք ներկայացնող նմուշներ են։ Գտնված աղորիքները մակույկաձև և գոգավոր են, իսկ խաղողաստրի գործիքները՝ ձագարաձև։ Այդ իրերի մի մասը հանձնված է Նախիջևանի մարզային պատմության թանգարանին, իսկ մի մասն էլ պահվում է Բ. Ալեքսանյանի մոտ։

Հին և նոր Արինջների շրջակայքում հայտնաբերվել են նաև հայկական հին դամբարաններ, պաշտամունքի իրեր։ Նախնադարյան բնակավայրեր են հայտնաբերվել «Քհաներ» կոչվող վայրում (հինգ բնակարան, իրար կողքի, գետնափոր, որոնք ունեն 4—5 մ երկարություն, 2—3 մ լայնություն և 2—2,5 մ բարձրություն)։ 1960—1961 թթ. ներկայիս գյուղի գրասենյակի հիմքի կառուցման ժամանակ հողի ընդերքից հայտնաբերվեց մի քանի դամբարան։ Հնության այլևայլ հետքեր են պահպանված պատմական գյուղի և այժմյան Արինջի շրջակայքում։

Ներկայիս գյուղից մեկ կիլոմետր դեպի «Դյադուկ» կոչվող փոքրիկ բլուրը, խաղողի այգիների մոտ գտնվում է «Կույս Վառվառ» մատուռը։ Իսկ գյուղից 2 կմ դեպի Շահբուզ շրջկենտրոնը, անմիջապես Շահբուզից Սիսիան տանող ճանապարհին կպած, կամուրջի մոտ կա մի գյուղատեղի։ Մի քանի տարի առաջ պարզ կերպով նկատելի էին տների, ծառերի հետքերը, իսկ այժմ այն վերածվել է արտերի։ 1964 և 1969 թթ. այդտեղ, մոտավորապես 2 մ խորության մեջ հայտնաբերվել են կարասների մի քանի խմբեր։ 1971 թ. մեր հետազոտությունների ժամանակ այդտեղ հայտնաբերվեցին իրար կողքի պառկեցրած ևս 4 կարասներ, որոնց հատակին կար գինու սև մրուր։ Իսկ շրջակայքում գտնվող արտերից ի հայտ եկան խաղողամշակման գործիքներ։ Մեր կարծիքով այդ վայրում ժամանակին եղել է գյուղ կամ գուցե գինու ընդարձակ պահեստ։

Բիշանակ (Ոփիք, Բշնաղ, Կարմալինովկա). — Շահապունիքի պատմական այս գյուղը գտնվում է Նախիջևանչայ գետի վերին հոսանքի շրջանում, Սիսիանի լեռնանցքից ներքև, Շահբուզից Սիսիան տանող ճանապարհին։ Գյուղը Շահբուզ շրջկենտրոնից հեռու է 15 կմ, Շահբուզի շրջանի մեծ գյուղերից մեկն է, տեղավորված է անտառի փեշին, գետափին։

Պատմական գյուղի անցյալի մասին գրավոր աղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել։ Ներկայիս գյուղից մոտ 3 կմ վերև, անտառի մեջ գտնվում է «Մարնի փոշտ» ավերված գյուղատեղին. կարելի է կարծել, որ այստեղ եղել է պատմական գյուղը՝ Ոփիքը։ «Մարնի փոշտ» գյուղատեղում այժմ էլ մնում են հայկական եկեղեցու ավերակները, որի պատերը պահպանվել են 2,5—3 մ բարձրությամբ, եկեղեցին ունի քառամույթ գմբեթավոր բազիլիկայի հորինվածք։ Այն կառուցված է եղել բազալտե քարերից. շինարարական ոճն ու արվեստը վկայում են նրա XI—XII դարերի կառույց լինելու մասին։ Այդ գյուղատեղում վերջին տարիներս գոմեր կառուցելու ժամանակ մասսայական կարգով հայտնաբերվեցին խոշոր եղջերավոր անասունների տասնյակ կմախքներ։ Իսկ Սիսիան տանող ճանապարհին գտնվող աղբյուրի շրջակայքից հայտնաբերվել են մեծ քանակությամբ հայկական տապանաքարեր։

Բիշանակի շրջակայքի հնությունները վկայում են, որ այդ վայրը, անտառի բացատները եղել են հայկական վաղեմի բնակավայրեր։ Ներկայիս գյուղից վերև, Բաթաբաթ վայրում, օդերևութաբանական կայանից քիչ ներքև կան հայկական միջնադարյան մի գյուղի ավերակներ՝ քանդված եկեղեցի, գերեզմանատուն, տների հետքեր։ Բ. Ալեքսանյանի ուսումնասիրությունների ժամանակ այդտեղ հայտնաբերվել է վաղեմի հնություն ունեցող մի դամբարան, որն ունի 7 մ երկարություն և 4 մ լայնություն։ Դամբարանը ծածկված է եղել սալիկներով. 2 մ երկարություն ունեցող ձկնաքանդակ տապանաքարով։ Այդ գյուղատեղից քիչ հեռու, կանաչապատ մարգագետինների շրջանում կա 4 սենյակից բաղկացած ժայռակոփ բնակարան, որոնց սենյակների լայնությունը կազմում է 4—5 մ, բարձրությունը՝ 2 մ, իսկ երկարությունը՝ 4,5—5 մ։ Այդ ժայռի վրա կա հայերեն լեզվով

ընդարձակ արձանագրություն (3 տող), որի քայքայված լինելը հնարավորություն չտվեց այն ընդօրինակելու։ Ժայռակոփ բնակարաններից մեկի մուտքի դռան վրա քանդակված է մարդկային մի կերպարանք։

Պատմականորեն ստույգ հայտնի չէ թե երբ է դադարել կյանքը «Մարնի փոշտ» գյուղատեղում և երբ է հաստատվել այժմյան գյուղը։ Միայն հայտնի է, որ 1677 թ. Նախիջևանի Շարիֆ խանի կողմից այս գյուղն ավերվել է, նրա բնակչության մի մասը սրի է քաշվել։ Մոտավորապես 1750—1760 թթ. Բիչանակի հայությունը գաղթել է այդտեղից։ Եվ շուրջ 1842—1845 թթ. այդտեղ բնակություն է հաստատել մալական ազգարնակչությունը։ 1919 թ. մալականները ևս գաղթել են այդտեղից (նրանց մի մասը բնակություն է հաստատել ՀՍՍՀ Սևանի շրջանում)։

Բիչանակ գյուղից մոտ 1 կմ ներքև, Նախիջևանչայ գետի ափին գտնվում է «Սոլդատսկի» բնակատեղին։ Այդ բնակատեղին հիմնվել է 1820—1825 թթ. և մի առանձին կայանի է վերածվել, որը տեղադրված է եղել ձորի հարթավայրային մասում, գրավելով բավական մեծ տարածություն։ Վերջերս Բ. Ալեքսանյանի պեղումների շնորհիվ հայտնաբերվեց այդ կայանի գերեզմանատունը։

ՁԱՌՆԱԹՈՒՆ (Եզատունք).— Շահապունիքի պատմական Եզատունք գյուղը շրջանի ներկայիս Զառնաթուն գյուղն է։ Այն գտնվում է Բիչանակից մոտավորապես 4 կմ ներքև, Նախիջևանչայի ձախ ափին, գետից, Շահբուղից Սիսիան տանող ճանապարհից մոտ 2 կմ դեպի անտառապատ լեռնալանջերը։ Ներկայիս գյուղի հայկական գերեզմանատան և մյուս հնությունների ուսումնասիրությունը հաստատում է գյուղի մեծ լինելը։ Սակայն պատմական աղբյուրներում այդ գյուղի անցյալի մասին տեղեկություններ չեն պահպանվել։

ԽՆՁՐԱ (Խանդիրակ, Խնձորակ).— Այս գյուղատեղին գտնվում է Բիչանակից 1,5—2 կմ ներքև, Նախիջևանչայ գետի աջ ափին, գետից 2 կմ դեպի լեռնալանջերը, անտառով շրջապատված։ Այս գյուղի անցյալի մասին գրավոր աղբյուրները լռում են։ Տեղանքի ուսումնասիրությունը թույլ է տալիս կարծելու, որ Խնձրան եղել է միջին մեծության գյուղ, տեղադրված անտառի բացատային մասում, շրջապատված անտառային խնձորենիներով, որի համար էլ անվանվել է Խնձորակ, Խնձրա։ Այդ գյուղատեղից սայլի ճանապարհ է գնում դեպի Բիչանակի «Մարնի փոշտ» գյուղատեղին։ Գյուղի ավերակներում, կիսաքանդ վիճակում դեռ մնում է հայկական եկեղեցին, որի փլատակներում կան տասնյակ խոշոր (2—3 մ երկարությամբ) խաչքարեր, որոնցից մեկն ունի «ԹՈՒՀՁ» թվագրությունը։ 1919—1920 թթ. Խնձրայի բնակչությունը տեղափոխվել է Բիչանակ գյուղը, որից հետո Խնձրան այլևս չի բնակեցվել։

ԱՇԱՂԸ ՂՇԼԱՂ (Աղտավ, Ալիմեհմեդ Ղըշլաղ).— Այս գյուղը գտնվում է Նախիջևանչայ գետի աջ ափի ձորակում, Բիչանակ գյուղից մոտ 7—8 կմ ներքև։ Հին հայկական գյուղ է։ Գյուղից քիչ դուրս, դաշտում գտնվում է հայկական գերեզմանատունը։ Այս գյուղի անցյալը ևս անհայտ է։ Հիմք կա ենթադրելու, որ սրա մոտ տեղադրված է եղել Աղտավ գյուղը։

ՅՈՒԽԱՐԻ ՂՇԼԱՂ (Արբոյքայ, Մարաղա Ղշլաղ).— Գյուղը գտնվում է Աշաղը Ղշլաղից 2—3 կմ վերև, լեռների գրկում։ Այժմյան գյուղից վեր, «Ղշլաղ քհալարի» (Ղշլաղի հին, գետնափոր բնակավայր, քարայրներ) անվանվող վայրում, ձորի լանջին գտնվում են պատմական Արբոյքայ գյուղի հետքերը։ Գյուղի շրջակայքում գտնվել են բրոնզեդարյան բնակավայրեր, հայկական քանդակներով գերեզմանաքարեր։

ՔՈԼԱՆ (Ոլենի, Քոլանի Ղշլաղ).— Շահապունիքի պատմական Ոլենի գյուղը ներկայիս Շահբուղի շրջանի Քոլան գյուղն է, որը շրջկենտրոնից 12 կմ է հեռու։ Այն տեղադրված է Նախիջևանչայ գետի աջ ափին, Սիսիան տանող ճանապարհին։ Պատմական գյուղը տեղադրված է եղել ներկայիս գյուղից 1 կմ վերև։ Հին գյուղի ավերակների ուսումնասիրությունից երևում է, որ Ոլենին եղել է միջին մեծության գյուղ և ունեցել է հայկական եկեղեցի։

Գյուղից քիչ վեր գտնվում է Շահապունիքի հայտնի սրբավայրերից մեկը՝ «Հազարափրկիչ» մատուռը, որը մի գետնափոր շինություն է, ունի ծածկ։ Մատուռի ներսում կան գեղեցիկ քանդակազարդ խաչքարեր։ Մեր դիտումների, ինչպես նաև գրավոր աղբյուրների կցկտուր հաղորդումների հիման վրա կարելի է ենթադրել, որ այդ մատուռի տեղում միջնադարում կանգուն է եղել մի գեղեցիկ և մեծաշուք եկեղեցի։

ԳՅՈՄՈՒՐ (Գոմեր, Գեհենիք).— Շահապունիքի պատմական Գոմեր, Գեհենիք գյուղը այժմյան Շահբուղի շրջանի Գյոմուր գյուղն է, որը գտնվում է Սարվարդ սարի ստորոտում, Նախիջևանչայ գետի և Սիսիան տանող ճանապարհի ձախ կողմում, խճուղուց 5 կմ հեռավորության վրա, գեղեցիկ, կանաչապատ լեռնաբլուրների և արոտավայրերի գրկում։ Գյոմուրը հին հայկական գյուղ է, որի կենտրոնական թաղամասում մինչև այժմ էլ կանգուն է Ս. Գրիգոր (տեղացիները սնվանում են Ս. Հովհաննես) եկեղեցին։ Ս. Գրիգոր եկեղեցին քարաշեն է, ունի երկու դուռ և քառամույթ գմբեթավոր բազիլի-

կայի հորինվածք։ Կից ունեցել է նաև դպրատուն, որի շենքը այժմ ավերված է։ Ժամանակի ընթացքում քայքայվել և փլվել է նաև եկեղեցու գմբեթը։ Այս եկեղեցու կառուցման մասին, ինչպես նաև գյուղի անցյալի մասին, գրավոր աղբյուրներում տեղեկություններ չկան։ Եկեղեցու պատերի վրայի և գյուղի երկու մեծ հին հայկական գերեզմանատների տապանաքարերի մաշված-մնացած արձանագրությունները կրցկտուր են։ Տեղանքի ուսումնասիրությունից կարելի է ենթադրել, որ պատմական Գեհենիքը գոյություն է ունեցել VIII—IX դարերից, իսկ նրա Ս. Գրիգոր եկեղեցին, հավանաբար, հիմնադրվել է XII դարի վերջերին և վերանորոգվել է մի քանի անգամ։ Գյոմուրի շրջակայքում տեսանելի են նաև մի քանի բերդ-ամրոցների հետքեր։ Հայտնի են գյուղի «Կապույտ խաղ», «Անապատ», «Հաղարափրկիչ» սրբավայրերը, «Շոռ ջուր», «Թթու ջուր» հանքային աղբյուրները, որոնք տեղացիների կողմից օգտագործվում են որպես բուժիչ ջուր։

ԿԺԱՁՈՐ (Քաջաձոր).— Այս գյուղը ներկայիս Շահբուզի շրջանի Կժաձոր գյուղն է, որը գտնվում է Նախիջևանչայ գետի ձախ ափին, Շահբուզից Սիսիան տանող ճանապարհից 1 կմ հեռավորության վրա, դեպի աջակողմյան լեռները։ Գյուղը տեղադրված է Սալվարդ լեռան ներքին փեշի հարթությունում, լեռներով շրջապատված։

Կժաձորը հին հայկական գյուղ է և Շահապունիքի աչքի ընկնող բնակավայրերից մեկն է եղել։ Այժմյան գյուղի շրջակայքում գտնվում են մի քանի ամրոցների հետքեր, 500—600 տապանաքարերով հայկական գերեզմանատուն։ Գյուղի կենտրոնական թաղամասում կանգուն է Ս. Գևորգ գմբեթավոր եկեղեցին, որը թվագրվում է մոտավորապես XIII դ. վերջին տասնամյակով։ Կժաձորի բնակչությունը ի հնուց հայկական է եղել։ Գյուղի շրջակայքում կան մի քանի հայկական սրբավայրեր, իսկ Խաչի ձոր կոչվող տեղամասի դաշտերում, բավական մեծ տարածության վրա տեսանելի են մի գյուղատեղի (գյուղաքաղաքի) հետքեր, որին տեղացիները կոչում են Դուքան-Բազար (նաև Ջարսու-Բազար)։ Ըստ ավանդության այդտեղ եղել է հայկական հին գյուղաքաղաք։

ՄԱԶՐԱ (Ջուր, Նորս-Մազրա).— Այս գյուղը գտնվում է Նորսչայ վտակի աջ կողմում, լեռների գրկում, ափսեանման հարթ տարածությունում։ Այն ունի միջին մեծություն։ Այժմ անմարդաբնակ է (1960 թվականից)։ Գյուղ տանող ճանապարհի ձախ կողմում, անմիջապես գյուղի մոտ գտնվում է «Կապույտ խաղ» սրբավայրը, որը մի մատուռ է և ունի մի քանի հնաքանդակ խաչքարեր։ Գյուղի գերեզմանատանը, նրա շրջակայքում կան գեղեցիկ, հին տապանաքարեր։ Այս գյուղի անցյալի մասին գրավոր վկայություններ չկան։ Այն անվանվել է նաև Նորս-Մազրա, որը մատնանշում է Նորս (պատմական Նորագյուղ) գյուղին մոտ լինելը։ Մեր տեղադրությամբ այս գյուղը Շահապունիքի Ջուր գյուղն է։

ՄԱՀՄՈՒԴԱՎԱ (Աղու, Մահմուդապատ).— Պատմական Աղու գյուղը ներկայիս Մահմուդավա գյուղն է, որը գտնվում է Նորսչայ վտակի ափին, Նորս գյուղից 4 կմ ներքև։ Գյուղի հնությունները վկայում են գյուղի հին հայկական լինելը։ Գյուղ մտնող ճանապարհին գտնվում է «Ջեչի քար» սրբավայրը։ Նորսչայ վտակի ձախ ափին, ծիրանիների այգում գտնվում է հին գյուղի հայկական գերեզմանատունը, որն ունի տասնյակ գեղեցիկ խոյաքանդակ տապանաքարեր։

ԳԱՐԱԲԱԲԱ (Բաբունք).— Համոզված ենք, որ Շահապունիքի Բաբունք կամ Բաբոնք գյուղը տեղադրված է եղել ներկայիս Գարաբաբա գյուղի տեղում։ Գյուղը գտնվում է անմիջապես Նախիջևանչայ գետի ձախ ափին։ Գյուղը տեղադրված է դիմացի կողմից մոտավորապես 100—110 մ բարձրություն ունեցող սև ժայռակուտով սկսվող լայնարձակ հարթությունում։

Պատմական Բաբունքը Շահապունիքի ամենամեծ գյուղերից մեկն է եղել, որի մեծությունը ապացուցող հետքերը մինչև այժմ տեսանելի են։ Գյուղից քիչ դուրս գտնվում է հայկական հին և մեծ գերեզմանատունը, տեսանելի են մեծ եկեղեցու ավերակները, իսկ գյուղի տների փլատակների մի մասը գտնվում է հենց սև անվանվող ժայռաշղթայի գլխին և ամրոցի շինություններ է հիշեցնում։ Տեղանքի ուսումնասիրությունը մեզ հանգեցնում է այն եզրակացության, որ պատմական գյուղը բավական ընդարձակ տարածություն է գրավել և ունեցել է մոտավորապես 500—550 տուն ազգաբնակչություն, ամրոցներ, եկեղեցի, վանք, ձիթհաններ։ Այդտեղ զարգացած է եղել նաև առևտուրը, կավագործությունը։ Ցավոք, այդ գյուղի պատմական անցյալի մասին գրավոր աղբյուրներում տեղեկություններ չկան։

Ստույգ հայտնի չէ թե երբ է հիմնադրվել պատմական գյուղի եկեղեցին։ Կարելի է ենթադրել, որ այն հիմնվել է XII դարի վերջերին և ավերվել է 1840—1845 թթ.։ Պատմական գյուղը պաշտպանության համար անբարենպաստ դիրք ունենալու և բանուկ ճանապարհի վրա լինելու պատճառով մի քանի անգամ ավերվել է, իսկ XIX դարի սկզբին նրա բնակչության թիվը խիստ նվազում է և առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հասնում նվազագույնի։

Վերջերս Նախ. ԻՍՍՀ մարզային պատմության թանգարանի դիրեկտոր Ֆ. Սուլթանովի կողմից Գարաբաբա գյուղից գտնվել է վաղ բրոնզեդարյան մի քարե դիմաքանդակ։ Այն կլոր

է, պարզ կերպով տեսանելի է մարդու կերպարանքը։ Դիմաքանդակն այժմ պահվում է մարզային թանգարանում։

ԽՈՌՆԻԿԱՎԱ (Խոռունիք).— Այս գյուղատեղին գտնվում է Շահբուզչայ վտակի ակունքներից վերև, Քեչիլ (պատմական Քրտն) գյուղից մոտ 4 կմ վեր, լեռնալանջին։ Այդ գյուղատեղին շրջակայի բնակչությունն անվանում է Խոռնիկալա, Խոռիկալա, որ նշանակում է Խոռնի բերդ։ Գյուղատեղում տեսանելի են հայկական գերեզմանատան և այլ շինությունների հետքեր։ Այն ունեցել է բերդ-ամրոց, որը գտնվում է գյուղին մոտիկ ժայռաշղթայի վրա։ Տեսանելի են ամրոցի հետքերը, պարիսպների ավերակները։ Այս գյուղի տեղում եղել է Ստ. Օրբելյանի հիշատակած Խոռունիք պատմական գյուղը։

ՔԵՉԻԼ (Քրտն).— Պատմական Քրտն գյուղը Շահապունիքի միջին մեծության գյուղերից է եղել։ Այդ բնակավայրը ներկայիս Քեչիլ գյուղն է, որը գտնվում է Շահբուզչայ վտակի վերին մասում։ Այժմյան գյուղի շրջակայքում տեսանելի են հին գյուղի եկեղեցու, տների, գերեզմանատան հետքերը։ Մեր զննումները և ծերերի հետ ունեցած զրույցները հիմք են տալիս եզրակացնելու, որ պատմական գյուղը ավերվել է մի քանի անգամ և այդտեղից հայերը գաղթել են մոտավորապես 1800—1810 թթ.։ Պատմական գյուղի Ս. Գրիգոր եկեղեցին, որը հիմնադրված է եղել XIV դարի վերջերին, ավերվել է մոտավորապես 1805—1810 թթ.։

ԱԳԱՐԱԿ.— Ստ. Օրբելյանի հիշատակած Ագարակ գյուղն է։ Պատմական այս գյուղը այժմ անմարդաբնակ է և ավերակ։ Այն գտնվում է Շահբուզչայ վտակի աջ ափին, Քեչիլ գյուղից մոտավորապես 3 կմ դեպի Քյուլուս (պատմական Քյոլք) գյուղը։ Պատմական Ագարակը տեղադրված է եղել ձորի մեջ, նրա երկարությամբ։ Այդ գյուղից հայերը գաղթել են (նրանց մի մասը բնակություն է հաստատել ներկայիս ՀՍՍՀ Սիսիանի շրջանի Ուզ գյուղում) 1800—1810 թթ., որից հետո այդտեղ բնակություն են հաստատել թաթարները և պարսիկները։ Ագարակն ունեցել է Ս. Խաչ վանքը, որի մասին Մ. Սմբատյանցը գրել է. «Ագարակայ Ս. Խաչ վանք 'ի ձորն Շահբունոց շինեալ 'ի Շահան-Գագկայ յամի 1451, և նորոգել 'ի տիկին Մարգարտէ յամի 1600»[4]։ Ըստ Մ. Սմբատյանցի հաղորդած տվյալների այս վանքը մինչև 1870—1875 թթ. կանգուն էր և տեղի բնակչությունը պարսիկներ են եղել։ Ագարակի պարսիկ բնակչությունը գյուղից հեռացել է մոտավորապես 1820—1825 թթ., որից հետո Ագարակում բնակություն չի եղել։

Ագարակի Ս. Խաչ վանքը կառուցված է բազալտից և ունեցել է գմբեթավոր բազիլիկայի հորինվածք։ Ներկայումս նրա պատերը մնում են 0,5—1 մ բարձրությամբ։ Ս. Խաչ վանքի երկու գեղեցիկ քանդակազարդ խաչքարերը գտնվում են Բ. Ալեքսանյանի մոտ։ Գյուղի մոտ կա մի մեծ հայկական գերեզմանատուն՝ 500—600 քանդակազարդ տապանաքարերով, որոնցից ուշադրություն է գրավում մի մեծ (մոտ 1—1,5 տ ծանրությամբ) տապանաքար՝ 2 մ երկարությամբ, 1,5 մ լայնությամբ և 2 մ բարձրությամբ։ Այդ տապանաքարի վրա քանդակված են երկու զորավարներ, որոնց երկուսի սրերն էլ դրված են իրենց կողքին։

ԵՆԻՔՅԱՆԴ (Զաղա, Սչանչուղ, Սչանլու).— Այս գյուղը գտնվում է անմիջապես Նախիջևանչայ գետի ձախ ափին, Շահբուզից Նախիջևան տանող ճանապարհի ձախ կողմում, ճանապարհից մոտ 400—500 մ դեպի գետը։ Անցյալում անվանվել է Զաղա, Սչանչուղ, Սչանլու, իսկ սովետական շրջանում՝ Ենիքյանդ (Նոր գյուղ)։ Գյուղի պատմական անցյալի մասին տեղեկություններ հայտնի չեն։ Մեր կարծիքով պատմական Զաղա գյուղը եղել է միջին մեծության գյուղ, մոտավորապես 40—50 տուն աղգաբնակչությամբ։ Մեր կողմից հայտնաբերված մի քանի հնագիտական բեկորները (խաչքար, ամրոցաշինության պատեր և այլն) հիմք են տալիս կարծելու, որ Զաղան ունեցել է նաև բերդ-ամրոց և եկեղեցի.

ԱԶԻԶԲԵԿՈՎ (Դալարինք, Դայլախլու).— Շահապունիքի պատմական Դալարինք գյուղը այժմյան Շահբուզի շրջանի Ազիզբեկով գյուղն է։ Այն գտնվում է Նախիջևանչայ գետի աջ ափին, Շահբուզից դեպի Նախիջևան տանող ճանապարհին, Շահբուզից 1,5 կմ հեռավորության վրա։ Գյուղի հնությունների ուսումնասիրությունները հիմք են տալիս ասելու, որ սա հին հայկական գյուղ է, տեղադրված է եղել գետափին, փոքրիկ բլրակի փեշին, ունեցել է խաղողի այգիներ, ինչպես նաև հայկական եկեղեցի։ Գյուղից քիչ դուրս, ցորենի արտերի մոտ գտնվող բլրակի վրա տեսանելի են ամրոցի հետքեր։ Գյուղը, բանուկ ճանապարհի վրա լինելով, ավերվել է մի քանի անգամ։ Դալարինք անվանումը աղավաղվելով կոչվել է Դայլախլու, իսկ սովետական շրջանում վերակոչվել է Ազիզբեկով։ Ստույգ հայտնի չէ թե հայերը երբ են գաղթել այդ գյուղից։ Միայն ըստ Ղ. Ալիշանի, 1890—1893 թթ. այդտեղ բնակվել է 16 տուն թաթար բնակչություն[5]։

ՄԱՐԱԼԻԿ (Ծավալք).— Այս գյուղը դրտնվում է Նախիջևան տանող ճանապարհին, Նախիջևանչայ գետի ձախ ափին, Սալասուզչայ

---

4 Տե՛ս Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 475։

5 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 487։

վտակի և Նախիջևանչայի միախառնման տեղում։ Պատմական Ծավալք գյուղը տեղադրված է եղել ներկայիս գյուղից մոտ 1 կմ վերև, ձորակի մեջ, մի անկյունանման ժայռակույտի փեշին։ Հին գյուղի (որը այժմ անմարդաբնակ է և ավերակ) ուսումնասիրությունից երևում է, որ այն եղել է փոքրիկ գյուղ, ունեցել է ամրոց։

ԳԱՐԱԲՈՅԱ (Հեծանա, Ղարաբոյա).— Գյուղը գտնվում է Սալասուղչայ վտակի ամենավերին մասում, Շադա (պատմական Շամեն) գյուղից մոտավորապես 3 կմ հեռավորության վրա, ձորակի բարձրադիր վայրում։ Գարաբոյա գյուղի տեղում եղել է Շահապունիքի Հեծանա պատմական գյուղը։ Գյուղի հնությունների ուսումնասիրությունները հիմք են տալիս ասելու, որ այն միջին մեծության հին հայկական գյուղ է եղել, նրա հնությունները վկայում են IX—X դարերի կյանքի մասին։ 1954—1955 թթ. նրա բնակչությունը տեղափոխվել է Բաղամլու (պատմական Օձոփ), որից հետո Հեծանան ավերակների է վերածվել։

ՇԱԴԱ (Շամեն, Շամին).— Այս գյուղը Շահապունիքի Շամեն գյուղն է։ Պատմական գյուղը տեղադրված է եղել Շահբուղի շրջանի այժմյան Շադա գյուղի տեղում, որը գտնվում է Սալասուղչայ վտակի վերին հոսանքի շրջանում, Գարաբոյա գյուղից 3 կմ ներքև։ Գյուղի անցյալի մասին ստույգ տեղեկություններ չկան։ Այժմյան գյուղում և նրա շրջակայքում գտնվող հայկական մեծ գերեզմանատան, ավերակ եկեղեցու հետքերը վկայում են Շադայի հայաբնակ և հայկական հին գյուղ լինելը։

ՔԱՄՈՒ ԽԱՉ (Ս. ԽԱՉ) ՎԱՆՔԸ.— Քամու Խաչ վանքը գտնվում է Սալասուղչայ վտակի աջ ափին, Շադայից մոտավորապես 2 կմ ներքև, երկար և բավական լայն ձորի մի ընդարձակ և տափարակ տեղում։

Քամու Խաչը սկզբում անվանվել է Ս. Խաչ վանք։ Այդ վանքը այժմ կիսավեր վիճակում է։ Ունի քառամույթ գմբեթավոր բազիլիկայի հորինվածք։ Քանդված են գմբեթը, ծածկը, պատերի վերին մասերը։ Վանքն ունի երկու դուռ, խորան, սեղան։ Կառուցված է բազալտից և գորշագույն քարերից։ Այս վանքի հիմնադրման մասին սկզբնաղբյուրներում տեղեկություններ չկան։ Բայց նրա կառուցվածքային ոճն ու հնությունները մատնանշում են XI դարին պատկանելը։ Այս նշանավոր վանքը վերակառուցվել է մի քանի անգամ։ Վանքի սյուներից մեկի վրա կա մի խաչքար՝ «ՅԻՇԱՏԱԿ է ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՓԻՐՂԱԼՈՎ» անթվակիր արձանագրությամբ, որն անշուշտ պատկանում է վանքի վերանորոգումների ժամանակին։ Խորանի մոտ կա մի գերեզմանաքար, որը ջարդված է և կարդացվում է մի հատիկ բառ. «ՅԻՍՈՒՍԻՆ....»։ Վանքը շրջապատված է եղել պարսպով, ունեցել է գավիթ և այլ շինություններ, որոնք վաղուց ավերվել են և այժմ միայն նրանց խղճուկ հետքերն են մնացել։ Վանքից քիչ հեռու, լեռնափեշերին կան տապանաքարեր, որոնք մատնանշում են վանքի գերեզմանատան տեղը։ Սակայն Սալասուղչայ վտակի հեղեղումների, լեռնագագաթներից վար խուժող անձրևաջրերի հետևանքով տապանաքարերի մեծ մասը տեղահան է արված։

ՍԱԼԱՍՈՒՂ (Սաղուասոնք).— Այս գյուղը գտնվում է Շահբուզ շրջկենտրոնից 4—4,5 կմ հեռավորության վրա, անմիջապես Շահբուզից Նախիջևան տանող ճանապարհի աջ կողմում։ Մինչև այժմ էլ նկատելի են հին գյուղի հետքերը։ Այժմյան գյուղը, որը մտնում է Շահբուզի շրջանի կազմի մեջ, Շահապունիք գավառի (գավառամասի) Սաղուասոնք գյուղն է։ Տեղանքի ուսումնասիրությունից պարզ կերպով երևում է, որ պատմական Սաղուասոնքը ունեցել է միջին մեծություն։ Հայկական բնակչությունը գյուղից դաղթել է մոտավորապես 1800—1820 թթ., որից հետո այդտեղ բնակություն են հաստատել թաթարները, թուրքերը, պարսիկները։ Ըստ Ղ. Ալիշանի տվյալների 1890—1891 թթ. այդտեղ բնակվում էր 25 տուն այլազգի բնակչություն[6]։

ԹՐՔԵՇ (Թաթերք).— Շահապունիքի պատմական Թաթերք գյուղը այժմյան Թրքեշ գյուղն է, որը գտնվում է Շահբուզից Նախիջևան տանող ճանապարհի աջ կողմում, ճանապարհից 5 կմ հեռավորության վրա։ Պատմանագիտական աղբյուրներում այս գյուղի մասին տեղեկություններ չեն պահպանվել։ Բայց տեղի հնությունները ապացուցում են այն, որ գյուղը գոյություն է ունեցել շատ վաղուց։ Այն եղել է Շահապունիքի մեծ գյուղերից մեկը և այդ գյուղի սահմաններից է Շահապունիք գավառամասը (գավառը) բաժանվել Ճահուկից։

ՃԱՀՈՒԿ

Պատմական Ճահուկ գավառի Ճահուկ գավառամասը ընդգրկում է ներկայիս Նախիջևանի ԻՍՍՀ Նախիջևանի շրջանի մի մասը, որը սահմանակից է Վայոց Ձորին, Շարուրին (ներկայիս Նախ. ԻՍՍՀ Իլյիչի շրջան), Նախիջևանին և Շահապունիքին։ Ղազար կաթողիկոս Ճահկեցին Ճահուկ անվան ծագման մասին գրել է. «Իսկ Ճահուկն որ է անուն գաւառաց և գեօղից վասն պատուականութեան տեղացն. որ թարգմանի ճահ և ըմբոն. այսինքն, գեղեցիկ հարկաւոր և կարի պատշաճ»[7]։ Այս գավառամասի բնակա-

6 Նույն տեղում, էջ 488։

7 Տե՛ս Ղ. Ճ ա հ կ ե ց ի, Գիրք Աստվածաբանական որ կոչի դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1735, էջ 330։

վայրերը տեղադրված են Նախիջևանչայ գետի և նրան սնող Ջահրիչայ վտակի երկարությամբ, նրանց աջ և ձախ ափերին։

Ըստ Ստ. Օրբելյանի կազմած ցուցակի Ճահուկ գավառի մեջ մտնող պատմական խոռատունիք (Գորադիս), Ղապեն (Ճանիքենդ), Աղբերխաչ (Աղխաչ), Կարմիր եկեղեցի և Ընջակերտ գյուղերը այժմ մտնում են ՀՍՍՀ Ազիզբեկովի շրջանի կազմի մեջ և ուսումնասիրված են, որի համար էլ այդ գյուղերի տեղադրությունը այս հոդվածում չենք մտցնում։

ՎԱՅԽՐ (Խախ).— Այս գյուղը գտնվում է Շահբուզից Նախիջևան տանող ճանապարհին, Նախիջևանչայ գետի ձախ ափին, դեպի լեռնափեշերը ձգվող ընդարձակ հարթությունում։ Գյուղի անցյալն անհայտ է։ Տեղանքի ուսումնասիրությունը թույլ է տալիս ասելու, որ գյուղը բավական մեծ է եղել, ունեցել է 100—130 տուն հայկական ազգաբնակչություն։ Գյուղի շրջակայքում տեսանելի են հայկական եկեղեցու, գերեզմանատան, ամրոցների հետքեր։ Այժմյան Վայխրը Ճահուկի պատմական Խախ գյուղն է, մտնում է Նախիջևանի շրջանի կազմի մեջ։

ԽԱԼԽԱԼ (Գայլակալ).— Ճահուկի պատմական Գայլակալ գյուղը այժմյան Նախիջևանի շրջանի Խալխալ գյուղն է։ Այն գտնվում է Նախիջևանչայ գետի ձախ ափին, Վայխր գյուղից 1 կմ ներքև։ Գյուղը տեղադրված է գետափի ընդարձակ հարթությունում, պատմական գյուղի տեղում։ Ներկայիս գյուղի բամբակի դաշտերում, լեռնափեշերին երևում են հին գյուղի շինությունները, ամրոցների հետքեր։

ԲԶԳՈՎ (Բզդավն, Բզդոն).— Այս գյուղը Ջահրիչայ վտակի վերին հոսանքի մոտ է գտնվում, Ջահրիից (պատմական Ճահուկ գավառակենտրոն) 16—17 կմ հեռավորության վրա։ Մեր կարծիքով դա պատմական Բզդավն գյուղն է։

Գյուղը տեղավորված է ձորակի մեջ։ Նրա պատմական անցյալը անհայտ է։ Հնությունները վկայում են գյուղի հին հայկական լինելը։ Մոտավորապես 1840—1860 թթ. այդտեղ բնակություն են հաստատել թաթարները։

ԳԱՐՄԱՋԱԹԱՂ (Թամաշաղ).— Այս գյուղը գտնվում է Բզդովից 2—3 կմ ներքև, Ջահրիչայ վտակի աջ կողմում, վտակից 2 կմ հեռավորության վրա, լեռնաբլուրներով շրջապատված ձորակում։ Տեղի հնության հետքերը վկայում են, որ գյուղը ունեցել է հայկական եկեղեցի, ամրոց, 50—60 տուն հայ ազգաբնակչություն։ Ըստ Ղ. Ալիշանի, սա Երնջակ գավառի Կամրջաթաղ գյուղն է[8]։ Թվում է, թե դա ճիշտ չէ, քանի որ գյուղը Երնջակ գավառից շատ և շատ հեռու է գտնվում։ Ըստ պատմվող ավանդությունների և գյուղի բնական դիրքի Գարմաչաթաղ գյուղը Ստ. Օրբելյանի նշած Ճահուկ գավառի Թամաշաղ գյուղն է։ Այս գյուղը ևս մինչև 1965 թ. մտնում էր Շահբուզի շրջանի կազմի մեջ, իսկ հետո՝ Նախիջևանի։

ԼԻՋԲԻՐՏ (Նորբերդ).— Լիզբիրտ գյուղը գտնվում է Ջահրիչայ վտակի ձախ կողմում, վտակից մոտավորապես 3 կմ հեռու։ Այս գյուղի տեղում եղել է Ճահուկի պատմական Նորբերդ գյուղը։ Պատմական գյուղը ունեցել է գեղեցիկ վանք, տեսանելի են մի ամրոցի հետքեր, մի քանի գեղեցիկ քանդակազարդ խաչքարեր գտնվում են գյուղի շրջակայքում։

ԲԱՅԻՍ (Պահեստ).— Ճահուկի պատմական Պահեստ գյուղը այժմյան Բայիս գյուղն է, որը գտնվում է անմիջապես Ջահրիչայ վտակի ձախ ափին, Լիզբիրտ գյուղից 6—7 կմ ներքև, դեպի Ջահրի գյուղը։ Գյուղի անցյալը անհայտ է։ Հնությունները վկայում են, որ գյուղը ունեցել է միջին մեծություն՝ մոտավորապես 140—150 տուն հայկական ազգաբնակչություն, վանք։

ՈՐԴՈՔ.— Ճահուկի պատմական Որդոք գյուղը այժմ ավերակ է, գտնվում է Ջահրիչայ վտակի աջ կողմում, վտակից 1,5—2 կմ հեռավորության վրա։ Գյուղատեղիի հնությունները մատնանշում են նրա միջին մեծության գյուղ լինելը։ Այն ունեցել է եկեղեցի և մոտավորապես 30—100 տուն հայկական ազգաբնակչություն։

ՆԱՋԱՐԱԲԱԹ (Վասակակերտ, Դամրզընդան).— Գավառի պատմական Վասակակերտ գյուղը ներկայիս Նախիջևանի շրջանի Նաղարաթաթ գյուղն է։ Այն գտնվում է Նախիջևանչայ գետի աջ ափին, Ջահրիչայ վտակի և Նախիջևանչայի միախառնման տեղում, Նախիջևանից 10 կմ հեռավորության վրա։ Պատմական գյուղը տեղադրված է եղել այժմյան գյուղի տեղում, ընդարձակ հարթությունում։ Այդ գյուղը անվանվել է նաև Դամրզնդան (Երկաթասալ)։ Գյուղի հայկական գերեզմանատան (գտնվում է ներկայիս գյուղի դպրոցի մոտ) հնությունների ուսումնասիրությունը ապացուցում է, որ Վասակակերտը եղել է մեծ հայկական գյուղ, ունեցել է հայկական եկեղեցի և 120—130 տուն հայ ազգաբնակչություն։

ԴԻԴԻՎԱՐ (Տիգեն).— Պատմական Տիգեն գյուղը այժմյան Նախիջևանի շրջանի Դիդիվար գյուղն է, որը գտնվում է Նախիջևանչայ գետի աջ ափին, Նաղարաթաթ գյուղից 1 կմ դեպի Նախիջևան։ Տեղի ուսումնասիրությունը հիմնավորում է գյուղի միջին մեծության լինելը։ Ունեցել է մոտ 100 տուն հայ ազգաբնակչություն։

Ա. ԱՅՎԱԶՅԱՆ

8 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 488։